

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՊԳՏԿ-ՈՒՄ

Տեղի ունեցավ բազալտի գծով հանձնաժողովի ընդլայնած նիստը, որին ներկա էին ռեսպուբլիկայի Պետականի, Ժողովրդական, գիտա-հետազոտական ու նախագծային ինստիտուտների և արդյունաբերական ձեռնարկությունների ներկայացուցիչները:

Լեռնային ապարներից և, մասնավորապես, բազալտից մամլափոշիներ ստանալու համար իր լաբորատորիայի կատարած աշխատանքի մասին հաղորդումով հանդես եկավ տեխն. գիտ. դոկտոր-պրոֆեսոր Ի. Ի. Կիտալզորոզսկին: Էփան հումքից մամլափոշիներ ստանալու պրոբլեմը ներկայումս մեծ հետաքրքրություն է ներկայացնում և զբաղում է զանազան երկրների գիտնականների ուշադրությունը: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է նշել չեխոսլովակյան գիտնականների դրական աշխատանքը, որոնք մշակել են այդ փոշիների ստացման նոր մեթոդները:

Պրոֆ. Կիտալզորոզսկին մանրամասնորեն լուսարժեքից ապակու բազալտի վրա զանազան կերամիկական նյութեր ստանալու համար սովետական գիտնականների նվաճումներն ու նրանց աշխատանքի արդյունքները: Հայտնի է, որ ապակին իբրև լավ կապակցող, միաժամանակ նոր նյութին մեծ ամրություն և կայունություն է տալիս չեխոսլովակյան, ճնշման խիստ փոփոխությունների, ինչպես նաև զանազան քիմիական ռեակցիաների նկատմամբ:

Հայլի առնելով իր ղեկավարած լաբորատորիայի բազմամյա փորձը, պրոֆ. Կիտալզորոզսկին ցանկություն հայտնեց բազալտի և տուֆերի օգտագործման հետ կապված հարցերի մշակման գործում օգնություն ցույց տալ Հայկական ՍՍՌ առանձին կազմակերպություններին ու մասնագետներին:

Բազալտի գծով կատարած իր աշխատանքի մասին հաղորդումով հանդես եկավ տեխն. գիտ. թեկնածու Ա. Աբրահամյանը (Ժողովրդական քիմիայի գիտա-հետազոտական ինստիտուտ): Նա կանգ առավ բազալտային հալվածքների քիմիական վերամշակման գծով կատարված հետազոտությունների վրա: Վերամշակման այս ձևը թույլ է տալիս մի ամբողջ շարք հազվագյուտ էլեմենտներ կորզել զանազան լեռնային ապարներից:

Ընկ. Տ. Շահաբյանը (Հայկական ՍՍՌ Ժողովրդական Ծինանյութերի արդյունաբերության վարչություն) ընդգծեց ռեսպուբլիկայում քարի ձուլումը զարգացնելու անհրաժեշտությունը: Խորհրդակցություն արդյունքներն ամփոփեց ՊԳՏԿ-ի նախագահի տեղակալ Է. Մկրտումյանը:



1953 թ. դեկտեմբերի 1-ին կայացավ «Պրոմիշլեննո-էկոնոմիչեսկայա գաղտնա»-ի ընթերցողների կոնֆերանսը:

Թերթի առաջ կանգնած խնդիրների մասին ներածական խոսքով հանդես եկավ Հայկական ՍՍՌ ՊԳՏԿ-ի նախագահի տեղակալ ընկ. Է. Մկրտումյանը:

Հայկական ՍՍՌ Ժողովրդական տեխնիկական բաժնի պետ

Ա. Միրզոյանն իր ելույթում կանգ առավ թերթի առանձին թերթությունների վրա: Հստ էություն հանդիսանալով ՍՍՌՄ-ում հրատարակվող միակ տեխնիկական թերթը, որը դեռևս բավականաչափ լայնորեն ու բազմակողմանիորեն չի ընդգրկում արդյունաբերական ձեռնարկություններ, գիտա-հետազոտական ինստիտուտների, նախագծային ու կոնստրուկտորական կազմակերպությունների ինժեներա-տեխնիկական աշխատողներին հետաքրքրող հարցերը:

Թերթը շատ քիչ ուշադրություն է դարձնում նոր տեխնիկա արժանատվորելու և նրա տեխնիկա-տնտեսական էֆեկտի, արտադրական պրոցեսների ավտոմատացման, արտասահմանյան տեխնիկայի մասին ինֆորմացիաներ տալու վրա և այլն: Անհրաժեշտ է ընդլայնել թերթի ծավալը, հրատարակել հավելվածներ, որոնց մեջ սիստեմատիկաբար պետք է ղեկնել ընդհանուր, հաշվարկային և տեղեկատու նյութեր: Ընթերցողներին լայնորեն տեղեկացնել սովետական ու արտասահմանյան հաստոցների, մեքենաների ու մեխանիզմների նոր կոնստրուկցիաների մասին, վերականգնել հայտարարությունների բաժինը:

Ե. Ռուսիկյանը (ՊԳՏԿ) նշեց թերթում ղեկավարված հետաքրքիր հոդվածները և ցանկություն հայտնեց, որպեսզի հետագայում թերթը ավելի շատ լուսարժեքի թեմա արդյունաբերության հարցերը:

Հայկ. ՍՍՌ Ժողովրդական Մենդի արդյունաբերության վարչության պետի տեղակալ Գ. Գյուլմիսարյանը պաշտպանեց Ա. Միրզոյանի առաջարկը՝ թերթի հավելվածները հրատարակելու անհրաժեշտության մասին: Այդ հավելվածներում, բացի նշված նյութերից, ցանկալի է հայտարարություններ ղեկնել Սովետական Միությունում թողարկվող սարքավորման և ապարատուրայի մասին, ցույց տալով դրանք ձեռք բերելու կարգը:

Հիշյալ հավելվածները նախընտրելի է լույս ընծայել ըստ ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի:

Գ. Բաղդասարյանը (Հայկական ՍՍՌ Ժողովրդական քիմիական արդյունաբերության վարչություն) վերլուծեց ընթացիկ տարում թերթում ղեկնված մի ամբողջ շարք հոդվածներ ու ելույթներ: Նրա կարծիքով հոդվածների մեծ մասը կրել են ընդհանուր բնույթի և չեն բավարարել տվյալ ճյուղի մասնագետ ընթերցողներին: Անբավարար ուշադրություն է նվիրվում արտադրության մնացուկների օգտագործմանը, արտադրության կառավարման անցիկային կառուցվածքի խնամքի անցմանը և այլն: Ընկ. Բաղդասարյանն ընդգծեց թերթի էջերում գլուխաբարների ու նորարարների աշխատանքները ավելի լայնորեն պրոպագանդելու անհրաժեշտությունը:

Յ. Խոսրոյանը (ՀԱՄՍ) առաջարկեց ավելի լայնորեն լուսարժեք երկրի առաջավոր ձեռնարկությունների փորձը, ներքին ռեզերվների բացահայտումը:

Ա. Շկուլովը («Պրոմիշլեննո-էկոնոմիչեսկայա գաղտնա»-ի թղթակից) նշեց ելույթ ունեցող ընկերների մտցրած առաջարկությունների արժեքավորությունը, և ներկաներին կոչ արեց հաճախակի հանդես գալ թերթի էջերում, ափսի մասնակ-

յուրկումն ցուցաբերել յոթնամյա պլանի կոնսոլիդացիոն թվերի ներկայումս ծավալված քննարկմանը:

Կոնֆերանսի մասնակիցները ցանկութեամբ հայտնեցին ձեռնարկութեանն որովհետև համապատասխան աշխատանք ծավալել այս թերթը լայնորեն տարածելու համար և խնդրել թերթի խմբագրութեանը հաշվի առնել կոնֆերանսում արված դիտողություններն ու առաջարկությունները:



1958 թ. դեկտեմբերի 9-ին տեղի ունեցավ խորհրդակցություն, նվիրված ԳՏԻՀ-ի ՊԳՏԿ-ի և ԳԱ Գիտական և տեխնիկական ինֆորմացիայի համամիութենական ինստիտուտի, գիտական և տեխնիկական ինֆորմացիայի վիճակի հարցին:

Խորհրդակցությանը ներկա էին Ժողովուրդների, միջինտարրութեանների, գերատեսչութեանների, գիտահետազոտական ինստիտուտների, բարձրագույն ուսումնական հաստատությունների, նախագծային ու կոնստրուկտորական կազմակերպությունների, արդյունաբերական ձեռնարկությունների և այլ կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ԳՏԻՀ-ի ՊԳՏԿ և ԳԱ Գիտական ինֆորմացիայի համամիութենական ինստիտուտի կողմից գիտական և տեխնիկական ինֆորմացիայի գծով կատարված աշխատանքի մասին ղեկուցեց ինստիտուտի ավագ գիտական աշխատող, տեխն. դիտ. թեկնածու Ն. Զելիկովը:

Ինստիտուտի հիմնական խնդիրն է գիտության և տեխնիկայի կարևորագույն բնագավառներն ապահովել գիտական, տեխնիկական և տնտեսական ինֆորմացիայով, ինչպես և առաջավոր գիտատեխնիկական ու արտադրական փորձի փոխանակության գծով ինֆորմացիոն նյութերով: Գիտական և տեխնիկական ինֆորմացիայի համամիութենական ինստիտուտում վերամշակվում են ավելի քան 15 հազար հայրենական

և արտարժի 88 երկրներից 50 լեզուներով ստացվող արտասահմանյան գիտական ու տեխնիկական ժողովուրդներ:

1959 թ. ինստիտուտը հրատարակելու է «Կոնֆերանս» ժողովուրդների 13 սերիա և տեխնիկայի ու գիտության տարբեր բնագավառների գծով «Էքսպրես» ինֆորմացիաների» 48 սերիաներ:

Այնուհետև ընկ. Զելիկովը մանրամասն կանգ առավ ինստիտուտի թողարկած ինֆորմացիոն գրականության թեմատիկայի վրա:

Մտքերի փոխանակության ժամանակ հանդես եկավ Մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի (ՄՄԳՀ-ի) ներկայացուցիչ Լ. Թովմասյանը, որը նշեց, որ ԳՏԻՀ-ի կողմից վերաբաշխվող արտասահմանյան ժողովուրդների թողարկվող ուղանում է 6—8 ամսով և նրանք կորցնում են իրենց արժեքը: Ընկ. Մաթեմասյանը (Նրևանի Բժշկական ինստիտուտ) ցանկություն հայտնեց, որ արագացվի բոլոր գիտական ինֆորմացիան ժողովուրդների հեղինակային ու առարկայական ցանկերի հրատարակումը, ինչպես նաև «Կոնֆերանս» ժողովուրդներում զետեղված ամփոփված տեսության հոդվածներ:

Մյուս ելույթներում խոսվեց «Կոնֆերանս» ժողովուրդների և «Էքսպրես» ինֆորմացիաների» բարձր արժեքի, դրանց հրատարակման ժամկետների ձգձգման, ԳՏԻՀ-ի հրատարակությունների թեմատիկայի ընդլայնման և ինստիտուտի հրատարակությունների մասին ստացվող ինֆորմացիաների բարելավման առթիվ:

Ամփոփելով խորհրդակցության արդյունքները, ՊԳՏԿ-ի նախագահի տեղակալ ընկ. Մկրտումյանն ընդգծեց գիտատեխնիկական ինֆորմացիայի կարևորությունը Հայկ. ՍՍՌ-ի ժողովրդական տնտեսության տեխնիկական պրոգրեսն ապահովելու համար: Առաջարկվեց ԳՏԻՀ-ի կողմից հրատարակվող ինֆորմացիոն գրականության նյութերի շուրջը կազմակերպել ընթերցողների կոնֆերանս:

ԱՆԴՐԿՈՎԱԿԱՍԻ ԷՆԵՐԳԵՏԻԿ ՍԻՍՏԵՄՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱՆՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՍՄԿՊ XX համագումարի դիրեկտիվներով նախատեսվում էր Ադրբեջանական, Հայկական և Վրացական ՍՍՌ էներգետիկ սխեմաների միավորումը նրանց արտադրողական ուժերի էլ ավելի արագ զարգացման հնարավորությունն ապահովելու համար: Հետագայում Անդրկովկասյան միավորված էներգետիկ սխեման պետք է կապվի Հյուսիսային Կովկասի հետ և նրա միջոցով՝ ՍՍՌՄ Եվրոպական մասի միասնական էներգետիկ սխեմի հետ:

Անդրկովկասի էներգետիկ սխեմաների միավորումը շատ կարևոր դեր է խաղում երեք ռեսպուբլիկաների էներգետիկ բազայի զարգացման գործում: Նա հնարավորություն կտա խիստ բարձրացնել ժողովրդական տնտեսության էլեկտրամատակարարման հուսալիությունը, ավելի ուժեղացնել կերպով օգտագործել վառելիքային և հիդրավլիկական ռեսուրսները:

Չնայած նրան, որ Անդրկովկասյան էներգետիկ սխեմաների միավորումը գտնվում է կոնկրետ իրականացման փուլում և

մոտակա մեկուկես տարում պետք է ավարտվի, դեռ վերջնական լուծում չեն ստացել մի շարք կարևոր գիտական և տեխնիկական հարցեր, որոնցից կախված է ողջ միավորման աշխատանքի էֆեկտիվությունն ու հուսալիությունը: Պետք է նշել, որ շատ հարցեր դեռ պատշաճ կերպով չեն լուծվել նաև մյուս էներգետիկ միավորումների աշխատանքի պրակտիկայում: Դրանց ավելանում են նաև Անդրկովկասի համար լուրահատուկ հարցերը՝ բարձր ճնշումային հիդրոէլեկտրակայանների կասկածների աշխատանքը, խիստ պսակ առաջացնող բարձր լծանային էլեկտրահաղորդման գծերի առկայությունը, աշխատանքի ռեժիմով և բնույթով խիստ բազմազան էլեկտրակայանների միավորումը և այլն:

Անդրկովկասի էներգետիկ սխեմաների միավորման հետ կապված հանգուցային հարցերը քննելու համար 1958 թ. նոյեմբերի 12—14-ը նրանում կայացավ Անդրկովկասի էներգետիկ սխեմաների հարցերին նվիրված գիտատեխնիկական խորհրդակցություն: Խորհրդակցությունը կազմակերպվել էր էներ-